«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Սովորողների հետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը. ինքնաստուգում և ինքնավերահսկում

Առարկան՝ *Անգլերեն*

Հետազոտող ուսուցիչ՝

Արաքսյա Հայրապետյան

Ուսումնական հաստատություն՝

Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _____ 3

Գլուխ 1. Ինքնուրույն ուսումնական գործունեություն _____ 4

Գլուխ 2. Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկա _____ 5

Եզրակացություն _____ 11

Օգտագործված գրականության ցանկ _____ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս՝ տեխնոլոգիական տեղեկատվության արագ աճով պայմանավորված, անհրաժեշտ է սովորողների մոտ ինքնուրույնության ձևավորումը և դրանից ելնելով ինքնուրույն աշխատանք կատարելը:

Ինքնուրույնությունն անձնավորության առանձնահատկությունների ընդհանրացումն է, որը դրսևորվում է նախաձեռնողականության, քննադատության, ճիշտ ինքնագնահատականի, իր կատարած գործողությունների և վարքագծի նկատմամբ պատասխանատվության զգացման մեջ:

Ավանդական կրթությունը սովորողին տալիս էր առարկայական գիտելիքներ, բայց այսօր միայն գիտելիք տալը բավարար չէ: Անհրաժեշտ է ուսուցչակենտրոն ուսուցման ձևերից անցում կատարել աշակերտակենտրոն ուսուցման ձևերին, որոնք կնպաստեն սովորողների մոտ ՀՊՉ-ով նախատեսված կարողունակությունների ձևավորմանը [1], որի արդյունքում կունենանք անձնավորություն, ով ունի ակտիվ ստեղծագործական հմտություններ, կարողանում է արագ արձագանքել փոփոխվող իրավիճակներին և կանխատեսել իրադարձությունների զարգացումը:

Ժամանակակից մանկավարժությունը պետք է ուղղված լինի սովորողների կրթության կազմակերպման այնպիսի ձևերի, որոնք նպաստում են ուսուցչի ղեկավարությամբ աշակերտների ինքնուրույն աշխատելուն, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերմանը, որը կապում է ճանաչողական պրոցեսը սեփական աշխատանքի արդյունքը ստանալու հետաքրքրության հետ:

Հետազոտական աշխատանքի նպատակն է.

1. Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի միջոցով բացահայտել, թե որքանով են ավագ դպրոց ընդունված սովորողների գիտելիքները անգլերեն առարկայից համապատասխանում ներկայացված արդյունքներին:
2. Ցույց տալ, արդյոք անհատական հանձնարարությունների մեթոդիկան նպաստում է բացահայտելու նրանց գիտելիքները:
3. Պարզել, արդյոք անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան նպաստում է սովորողների ինքնուրույն աշխատելուն:

Գլուխ 1. Ինքնուրույն ուսումնական գործունեություն

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը [2], յուրաքանչյուր ուսուցչի համար շատ պատասխանատու և բարդ աշխատանք է: Ակտիվություն եւ ինքնուրույնություն դաստիարակելը պետք է դիտարկել որպես սովորողների դաստիարակության բաղկացուցիչ մաս: Այս խնդիրը յուրաքանչյուր ուսուցչի համար առաջնային նշանակություն ունեցող խնդիրների շարքում է:

Խոսելով ինքնուրույնության ձևավորման մասին՝ անհրաժեշտ է նկատի ունենալ երկու սերտորեն կապված խնդիրները՝

- զարգացնել ինքնուրույնությունը ճանաչողական գործունեության մեջ, ուսուցանել նրանց ինքնուրույն տիրապետել գիտելիքներին, ձևավորել իրենց աշխարհայացքը,
- սովորեցնել նրանց ինքնուրույն կիրառել առկա գիտելիքները ուսման մեջ և գործնականում:

Ինքնուրույն աշխատանքը ինքնանպատակ չէ ։ Այն հանդիսանում է պայքարի միջոց սովորողների խորը և ամուր գիտելիքների համար, նրանց մոտ ակտիվության և ինքնուրույնության ձևավորման միջոց՝ որպես անհատի առանձնահատկություն, նրանց մտավոր կարողությունների զարգացման միջոց:

Ուսումնասիրելով ինքնուրույն աշխատանքի էությունը՝ առանձնացվում է գործունեության 3 ուղղություն, որոնցով կարող է զարգանալ ուսումնառության ինքնուրույնությունը՝ ճանաչողական, գործնական և կազմակերպչական – տեխնիկական:

Ինքնուրույն աշխատանքը այնպիսի աշխատանք է, որը կատարվում է առանց ուսուցչի անմիջական մասնակցության, բայց նրա հանձնարարությամբ, հատուկ հատկացված ժամանակամիջոցում: Միևնույն ժամանակ, սովորողները գիտակցաբար ձգտում են իրենց ջանքերով հասնել նպատակին և ցույց տալ գործողությունների արդյունքը:

Ավելի վաղ ասվածից երևում է, որ ինքնուրույն աշխատանքը աշակերտի ուսումնական գործունեության բարձրագույն աշխատանքն է և ուսումնական գործընթացի բաղկացուցիչ մասն է, ուստի դրան բնորոշ է դաստիարակչական, կրթական և զարգացնող գործառույթներ:

Ուսուցման ընթացքում կիրառվում են սովորողների ինքնուրույն աշխատանքի տարբեր տեսակներ, որոնց օգնությամբ նրանք ինքնուրույն ձեռք են բերում գիտելիքներ, հմտություններ և կարողունակություններ: Ուսումնական գործընթացում կիրառվող ինքնուրույն աշխատանքի բոլոր տեսակները կարելի է դասակարգել ըստ տարբեր հատկանիշների՝

- դիդակտիկ նպատակի
- սովորողների ուսումնական գործունեության բնույթի
- բովանդակության
- ինքնուրույնության աստիճանի
- ստեղծագործական տարրերի:

Ինքնուրույն աշխատանքը կարող է ունենալ 3 ուղղվածություն՝

1. Նոր գիտելիքների ձեռքբերում:

2. Գիտելիքների ստուգում և ամրապնդում:

3.Ստեղծագործական ունակությունների զարգացում (շարադրություններ, ռեֆերատներ, զեկույցներ):

Գլուխ 2. Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան

Այս հետազոտական աշխատանքի մեջ ես կանդրադառնամ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերից մեկին, որը ես կիրառում եմ գիտելիքների ստուգման և ամրապնդման համար: Դա ՛՛Անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան՛՛ է [3]: Ծրագրի որոշակի բաժին կամ թեմա ավարտելուց հետո, անհրաժեշտ է լինում ստուգել թե ինչպես են սովորողները յուրացրել այն: Այստեղ էլ հենց օգնության է գալիս այս մեթոդիկան, որը նախատեսված է անցած նյութի կրկնության և ամրապնդման համար:

Յուրաքանչյուր անհատական հանձնարարություն կազված է տվյալ բաժնին կամ թեմային վերաբերող հարցերից: Անհատական հանձնարարությունների քարտերի քանակը կախված է բաժնի կամ թեմայի ծավալից: Հարցերի քանակը յուրաքանչյուր

անհատական հանձնարարության քարտում պետք է նույնը լինի: Քարտի մեջ պետք է լինեն հարցեր բաժնի տարբեր մասերից, որպեսզի սովորողը կարողանա ստուգել իր գիտելիքները ամբողջ բաժնի վերաբերյալ: Առավել կարևոր հարցերն ու առաջադրանքները կարող են կրկնվել տարբեր անհատական հանձնարարություններում, որպեսզի սովորողը հնարավորություն ունենա քննարկել հարցի պատասխանը տարբեր զուգընկերների հետ և ստուգել իր գիտելիքի ճշտությունը:

Ներկայացնեմ անհատական հանձնարարության քարտի նմուշներ (այս քարտերը ես կիրառում եմ 10-րդ դասարանի ուստարվա սկզբում՝ միջին դպրոցի գիտելիքները վեր հանելու նպատակով):

Grade 10 - Task 1

1. Make the sentences interrogative and negative.

Ted is my friend. She must go to school.

Liz has got a cousin. They can do all the exercises.

2. Put in *way* or *road*

to lose one's ---

to ask the ---

to go along the ---

to cross the ---

on one's --- to

3. Choose one of the relative pronouns (who, whose, which).

This is the timetable - shows all our lessons.

I like schools - cafeterias are nice.

She is the teacher - teaches Geography.

4. Choose the corresponding pronoun (each other, themselves).

Julia and Robert always help - .

They looked at - in the mirror .

Grade 10 - Task 2

1. Give short and full positive answers:

Does she want to be a pilot ?

Do they like your friend?

2. Translate the colours՝

Դեղին, կանաչ, շագանակագույն, կապույտ, կարմիր, սպիտակ, սև, մոխրագույն:

3. Write down the demonstrative pronouns. Explain their usage.

4. Make up pairs.

a bottle of	bread
a bunch of	milk
a loaf of	bananas
a bar of	oil
a cup of	soap
a piece of	coffee
a can of	cheese

Այս մեթոդիկան հնարավորություն է տալիս սովորողներին ինչպես ինքնուրույն աշխատել, այնպես էլ զույգով: Սովորողները ստանալով քարտերը նախ աշխատում են ինքնուրույն: Ինքնուրույն աշխատելիս նրանք կարող են վերականգնել մոռացածը՝ օգտվելով իրենց գրառումներից, դասագրքից, դիմել ընկերներին կամ ուսուցչին: Քարտի բոլոր հարցերն ու առաջադրանքները կատարելուց հետո, սովորողները սկսում եմ ստուգել իրենց կատարած աշխատանքը փոփոխական կազմով զույգերում՝ յուրաքանչյուր հարցը նոր զուգընկերոջ հետ:

Քարտերի կատարման ընթացքը վերահսկվում է համապատասխան հաշվառման աղյուսակի օգնությամբ, որի մեջ կետով նշվում է ընթացքի մեջ գտնվող քարտի համարը, իսկ + -ով, արդեն ավարտված քարտը: Փոխտուգված քարտի դիմաց դրվում է շրջանի մեջ առնված + :

Անհատական հանձնարարությունների հաշվառման աղյուսակ

	Անուն Ազգանուն		Ա.Հ 1	Ա.Հ 2	Ա.Հ 3	Ա.Հ 4	Ա.Հ 5	Ա.Հ 6	Ա.Հ 7	Ա.Հ 8	Ա.Հ 9	Ա.Հ 10
1	Աբրահամյան	Անահիտ		.								
2	Անոյան	Անահիտ			+							
3	Բալյան	Էլեն	+				.					
4	Բաղդասարյան	Անդրանիկ								+		
5	Գամարյան	Վիկտորյա									.	

Շատ կարևորում եմ այս մեթոդիկայի կիրառությունը, քանի որ այն հնարավորություն է տալիս սովորողներին ձեռք բերել ինքնուրույն աշխատելու հմտություններ, ինքնուրույն ստուգելու և վերահսկելու գործընթացը:

Ըստ Բուրյակի՝ ինքնուրույն աշխատանքի արդյունավետության բարձրացման համար կարևոր է ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին հետադարձ կապը: Ներքին հետադարձ կապը այն ինֆորմացիան է, որը սովորողը ստանում է իր ինքնուրույն աշխատանքի ընթացքի և արդյունքների մասին: Դա ապահովելու համար պետք է օգտագործել ինքնավերահսկում և ինքնաստուգում [4]: Այս երկուսն էլ շատ լավ իրագործվում են անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի կիրառման ժամանակ, քանի որ սովորողը աշխատելու ընթացքում կարողանում է վերահսկել իր գործընթացն ու տեմպը, իսկ փոխստուգման ժամանակ էլ իրականացնում է ինքնաստուգում և ինքնագնահատում:

Հետազոտական աշխատանքս հիմնված է 10-րդ դասարանում իրականացրած ինքնուրույն աշխատանքի վրա՝ անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկայի կիրառմամբ: Սովորողները այն կատարել են 10-րդ դասարանի ուստարվա սկզբում: Նախատեսված է եղել միջին դպրոցի անցած նյութի կրկնության համար: Նախքան բուն աշխատանքին անցնելը՝ սովորողներին բացատրել եմ անհատական հանձնարարոթյունների փոխստուգման մեթոդիկայով աշխատանքի ընթաքը:

Անցած նյութի կրկնության համար ունեի անհատական հանձնարարության 20 քարտ: Կրկնության համար տրված էր 8 դասաժամ: 1-ին օրը սովորողների տեմպը այնքան էլ արագ չէր: Պարզվեց, որ նրանք մոռացել էին շատ հարցեր: Մոռացված

հարցերի պատասխանները վերհիշեցին իմ օգնությամբ կամ դիմեցին իրենց այն ընկերներին, որոնք գիտեին հարցերի պատասխանները: Առաջին քարտերը ավարտելուց հետո սկսվեց փոխստուգումը՝ զույգով աշխատանքի միջոցով: Ես հետևում էի, որ յուրաքանչյուր հարց ստուգվի նոր զույգի հետ: Փոխստուգման ընթացքում սովորողները կատարում էին լրացումներ: 2-րդ օրը ինչպես և սպասվում էր, սովորողները կարողացան ավելի շատ քարտեր գրել և փոխստուգվել: Յուրաքանչյուր նոր դաս ավելի էր հեշտացնում սովորողների աշխատանքը: Դասարանում կային սովորողներ, որոնք ունեցան դժվարություններ, քանի որ նախորդ տարիներից ունեին չյուրացված թեմաներ: Այս աշխատանքը ամփոփվեց գործնական աշխատանքով, որի արդյունքները կներկայացնեմ հաջորդիվ:

9-րդ դասարան



10-րդ դասարանի սկիզբ



Համեմատելով երկու արդյունքները տեսնում ենք, որ 9 գնահատական ունեցողների թիվը ընկել է, որի արդյունքում 8 գնահատական ունեցողների թիվը բարձացել է: Այստեղից երևում է նաև, որ 7 գնահատական ունեցողներից 2 սովորող աճ են գրանցել, իսկ մյուս 3 սովորողները ընդհակառակը՝ ունեցել են գնահատականի իջեցում:



Եզրակացություն

Այսպիսով՝ ինքնուրույնությունն ու ինքնուրույն աշխատանքը շատ կարևոր են սովորողների հետագա դրսևորումների համար: Ինքնուրույնության զարգացման նախապայմանը ազատությունն է: Ուսուցիչը պետք է լինի ուղղորդողի դերում: Կարևորելով գիտելիքի փոխանցումը՝ չպետք է մոռանալ նաև այն, որ սովորողները իրենք պետք է հնարավորություն ունենան ինքնուրույն աշխատելու և ինքնուրույն արդյունքներ ցուցաբերելու: Ուսուցիչը իր ամենօրյա դասապլանը գրելիս պետքէ մտածի, ինչ հնարներ և մեթոդներ օգտագործի աշակերտների ինքնուրույնությունը զարգացնելու համար: Պետք է ընտրել աշակերտների տարիքային առանձնահատկություններին համապատասխան ինքնուրույն աշխատանքի ձևեր: Ինքնուրույն աշխատանքի ձևերը բազմաթիվ են և դրանց կիրառությունը կախված է նաև այն նպատակից, որը հետապնդում է ուսուցիչը տվյալ օրվա աշխատանքները կազմակերպելիս:

Իմ կիրառած մեթոդիկայի արդյունքում ես կարողացա պատասխանել ներածության մեջ առաջ քաշված հարցերին:

1. Ես բացահայտեցի, որ սովորողների 9-րդ դասարանի գնահատականները չեն ներկայացրել գիտելիքների իրական պատկերը:
2. Ցույց տվեցի որ անհատական հանձնարարությունների փոխստուգման մեթոդիկան իսկապես նպաստել է սովորողների գիտելիքների բացահայտմանը:
3. Սովորողների հետ հետադարձ կապի արդյունքներից պարզ դարձավ, որ այս ինքնուրույն աշխատանքի ժամանակ նրանք հնարավորություն են ունեցել ինքնավերահսկել և ինքնաստուգել իրենց աշխատանքը, ինչը դրական է գնահատվել նրանց կողմից:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՊՉ – էջ 2-6, Երևան 2020
2. https://nsportal.ru/npo-spo/obrazovanie-i-pedagogika/library/2016/11/21/effektivnost-samostoyatelnoy-raboty
3. Մ. Մկրտչյան - Կրթության կազմակերպման կոլեկտիվ եղանակի կայացման հիմնահարցերը << Մանկավարժական նախաձեռնություն >> հայկական ասոցիացիա, Երևան 2001 թ.
4. Буряк В. К., Самостоятельная работа учащихся, Москва <<Просвещение>>, 1984,